ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ ռենտգենյան զննող սարքավորումների վերանորոգման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 28.09.2017թ. N 111/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 06.10.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Կ.Գևորգյանը, Գ.Եղոյանը, Մ.Մանուկյանը, Հ.Գալստյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Վ.Արշակյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

«Կոնսէլ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Չարենցի 44-7)

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

«Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտ:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

«Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ծառայության անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	Նախահաշվային գինը ՀՀ դրամ
		«Կոնսէլ» ՍՊԸ		
1	Ռենտգենյան զննող սարքավորումների վերանորոգման կամ սպասարկման ծառայություններ	5 400 000	6 480 000	6 489 000

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «Կոնսէլ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. «Կոնսէլ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
3. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե էլեկտրոնային հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:
4. Համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկել ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:
5. Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Արշակյան

Անդամներ՝ Կ.Գևորգյան

Գ.Եղոյան

Մ.Մանուկյան

Հ.Գալստյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան